# «ՍՆԱՓՓ» ՓԲԸ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026-11-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2026 թ. թիվ 1/454 Ա

«ՍՆԱՓՓ» ՓԲԸ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է[1]» կետը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 25.10.2011թ. թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման, մասնաճյուղերի հաշվառման, ղեկավարների որակավորման, մասնագիտական համապատասխանության ստուգման և գրանցման կարգը» կանոնակարգ 17/01-ի 83-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության կոմիտեի եզրակացությունը (04.11.2026 թ. թիվ 51 արձանագրություն) և «ՍՆԱՓՓ» ՓԲԸ-ի կողմից 16.04.2026 թ., 03.06.2026 թ., 30.07.2026 թ., 13.08.2026 թ., 14.08.2026 թ., 31.08.2026 թ., 16.09.2026 թ., 15.10.2026 թ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված միջնորդագրերն ու կից փաստաթղթերը՝

Որոշումեմ.

1. Գրանցել Միքայել Գաբրիելյանին «ՍՆԱՓՓ» ՓԲԸ գործադիր տնօրենի պաշտոնում:
2. Գրանցել Հրաչիկ Դավթյանին «ՍՆԱՓՓ» ՓԲԸ գլխավոր հաշվապահի պաշտոնում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍՆԱՓՓ» ՓԲԸ մուտքագրվելու կամ «ՍՆԱՓՓ» ՓԲԸ՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ

.